



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 ժր. սուրեկիսի

Հասցե՝ Քեդ. на в. " ВЕРАДЗНУТІОНЪ " .— Руче Ред. du jour. " VERADZNOUTIOUN " Roustchouk

Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

Հայ ժողովուրդը — և մենք խօսում ենք անբարոյ հայ ժողովրդի մասին — գտնուում է պատմական մի շրջագարձ րօպէսում։ Սա նման չէ այն դրութեան, որ նա ունէր մինչև 1896—97 թ. թ., երբ, թուում էր, թիւրքահայ դատը, կրելով իր մէջ հայկական ամենաբարձր ձգտումները, իր լուծման նախընթաց օրւայ մէջ էր գտնուում։ Սա, ընդհակառակը, հէնց այն դրութիւնն է, որ ըստեղծւեց այդ դատի անաշուղ ու դառն ելքից ի վեր։ Եւ այդ դրութիւնը բոլորովին անբարոյ է նախորդից, բայցովին այլ պայմաններով է ընդգրկւած, բայցովին նոր պահանջներ է առաջացրած։ Եւ հէնց դրանով է, որ պէտք է բացառել հայ յեղափոխականների մտքերում բոյն դրած շիտթութիւնը, վարանումները՝ անդիակավար և անկողմնացոյց։ Դրանով է նոյնպէս, որ պէտք է բացառել հայ յեղափոխական գործի անկերպարան ու տարտամ վիճակն ահա վեց-եօթ տարիից ի վեր։ Յեղափոխականների շանքերը — թէ է իրան այդպիսի փորձեր — հանդիպեցան այնուհետև իրերի մէկ անյարձակելի և անյաղթելի դրութեան։ Նրանք անկարող եղան նոր շունչ պարզեւել գործին, վերակենդանացնել իրանց սպեռութիւնը, գտնել նպատակայարմար ուղի իրանց քաղաքական ձգտումների իրագործման համար։ Նրանք չը քննեցին նորաստեղծ հանգամանքները, չը փնտճեցին գործունէութեան նոր ուղի՝ համաձայն այդ հանգամանքների, այլ շարունակեցին ընթանալ միևնոյն նախկին ուղղութեամբ, որ, կորցրած իրան ստեղծող պայմանները, արդէն հնացել էր։ Դա մի ծանր սխալ էր, թէ է հասկանալի ու բացառելի։

Բայց այն սխալը, որ հասկանալի է այնպիսի մի րօպէի համար, երբ թիւրքահայ դատի ձախորդ ելքի շնորհով յեղափոխական մարքերին տիրել էր մտ-

լորում, դադարում է այլ ևս հասկանալի լինել ա՛յսօր, երբ բաւական ժամանակ է անցել, որպէս չի յեղափոխականները միջոց ունենային ուշքի գալու և շրջահայեաց կերպով աչք ածելու յեղափոխական գործի նորածող պայմանների վրայ, որպէս և գործունէութեան ասպարէշի վերայ մինչև սրամանահեռւոր շօրիզօնը։ Եւ սակայն հրապարակի վրայ մենք տեսնում ենք մտքերի նոյն շիտթութիւնը, նոյն մտլորումները, նոյն կոյր տեսողութիւնը, նոյն յամառութիւնը ստքերով կոխկրտելու մի և նոյն հնացած հողը։

Յեղափոխական միտքը չը պէտք է և չէ կարող մնալ քաղաքացած վիճակում։ Առաջացած հասարակական սրոշ դրութիւնից, պատմական որոշ րօպէից և դրանց հիման վրայ կազմած ուսումնամ իր հիմնական, իր մայրսկզբունքները, իրա իրախան գործադրութեան մէջ նա ենթակայ է հասարակական — քաղաքական հանգամանքների փոփոխման։ Նա, այո՛, պէտք է շարունակէ պահպանել իր յարատեւութեան սփին, իր վճռական ընթացքը, իր պատերազմիկ դիրքը, բայց այդ ոգին, այդ ընթացքը, այդ դիրքը նա պէտք է դարձնէ համապատասխան նոր միջավայրին, նոր մթնոլորտին, նոր հողին, որպէս չի ընդունակ լինի նորից ու միշտ առաջ յազարու և տիրանալու իր յաղթութեան պայմաններին։ Հակառակ դէպքում նրա սուրբ կոչը կը դառնայ ունայն բացականչութիւն, նրա բեղմնաւոր արգանդը կը վիժէ իր պտուղը և կենդանութիւնից նա կանցնէ մահ։

Դեռ կովկասեան վերջին հալածանքներից առաջ, քննելով առսական քաղաքականութիւնը մի կողմից թիւրքահայ դատի և միւս կողմից առսահայերի վերաբերութեամբ, « Հնչակում » և « Կերածնութեան » մէջ բարձրացաւ ձայն, որ հայ յեղափոխական գործը պէտք է առաջ մղէ նոր գործունէութեամբ նոր տակտիկայով։ Քաղաքական նոր հան-

դամանքները մի կողմից ցարիզմի ձեռքը գցելով թիւրքահայ դատի ճակատագիրը, միւս կողմից առսահայերի շուրջը ստեղծել էին մի նոր, ծանր ու տագնապալի մթնոլորտ։ Այդտեղ բարդեւէ էր դրութիւնը և առաջացել էին այնպիսի նոր պահանջներ, որոնց բնական հետեւանքն էր կռիւ ցարիզմի դէմ։ Իբրև սօցիալ-դեմօկրատներ, կանգնելով սօցիալիստական հողի վրայ, հայ յեղափոխական գործը կովկասում մենք կենտրօնացած ենք տեսնում գլխաւորապէս առսահայ բանուր դատակարգի վրայ, որը կոչւած է և որին վիճակւած է գործելու միատեղի կերպով Ռուսաստանի միւս աղքերի բանուր դատակարգերի հետ։ Դրա հետ միասին մենք մատնանիչ էինք լինում, որ քաղաքական նոր հանգամանքների շնորհով անհրաժեշտ է ընդլայնել հայ յեղափոխական գործունէութիւնը, կործանել գրա առաջ այն սահմանները, որ կան թիւրքահայի և առսահայի միջև, տարածել այդ գործունէութիւնը վանայ լծից մինչև կովկասեան լեռները, և գործել իւրաքանչիւր երկրի տեղական պայմանների համաձայն։

Այդ նոր տեսութեան շուրջը յանկարծ պայթեց բանակռիւ։ Ամենից առաջ բուռն բողոքներ ելան մեր սօցիալիստական հայեացքների վրայ։ Այդ բողոքները համեմած էին առաւել կամ նըւազ հնամաշ ու միամիտ դատողութիւններով, հասարակական հարցերի ըմբռնման մի ցաւալի բացակայութեամբ, շօյին իսասական խնցուցիչ աղաղակներով, — և այդ ամենը ո՛չ լուսաբանութիւն էին հարցերին և ո՛չ էլ առարկութիւններ սօցիալիզմի դէմ հայերիս մէջ։ Բայց թէ այդ գրողները և թէ ուրիշներ բանակռիւր գրել էին նաև մէկ այլ հողի վրայ, ուր բոլորովին անըստ պատել էր։ Նրանք չէին ուղում ընդունել իսկ, որ Ռուսաստանի գրութիւնը առսահայերին կը հարկադրէ կռիւ մղել ցարիզմի դէմ։ Ոմանք մինչև անգամ ուղղակի բացասում էին ամեն յե-

ղափոխական շարժում առսահայերի մէջ, յայտարարելով, որ հայութեան առաջ կայ ոմի միակ դատ, թիւրքահայ դատ, և որ մնացածը մտացածին է։

Բայց իրողութիւններն առաջ եկան և մեր հակաճառողներին տւին իրանց պատասխանը։

Դեռ մի քիչ առաջ հազիւ սկսած բանուրական շարժումները կովկասում գրաւեցին և առին իրանց յորձանքում նաև հայ բանուրներին։ Վերջիններս, այդպիսով, ինքնաբերաբար, մղւած յայտնի անտեսական պայմաններով և իրանց դատակարգային շահերով՝ վճռական կերպով անցան Ռուսաստանի միւս աղքերի բանուր դատակարգի յեղափոխական շարքերը։ Հայ բանուրների այդ քայլը յայտնուում է ամենափառաւոր էջերից մէկը հայութեան նորագոյն պատմութեան մէջ։ Եթէ մեծ է այդ քայլը իբրև քաղաքական մի գործ հայ բանուրի կողմից դէպի իր հարազատ ցեղը, նա աւելի մեծ է իբրև սկզբնական մի տուրք հայի բաժին պարտականութեան ընդհանուր մարդկային ցեղին։ Նա եղաւ ապացոյց, որ հայ հասարակութեան ամեն խաւերից բարձր կանգնելով, հայ բանուր դատակարգը սկսել է ըմբռնել իր պատմական իսկական դիրքն ու գերը, և ընդգրկելով սօցիալիստական գործը, նա զինուոր է գրում միջազգային բանակի յանուն հասարակարգի իրաւունքեան, եւ հենց որակով էլ յանուն իր հարազատ ցեղի ապստան թունակայ լծից։

Այդ մեծ երևոյթը սակայն դեռ բաւական չէր կարծես չը փոխութեան մէջ գցելու մեր կարճատես հակաճառողներին, որոնք գրանով տեսան որ կովկասում առսահայ բանուրը, հէնց իրերի գրութեան զօրութեամբ, ինքնաբերաբար, արդէն սկսել է կռուիւ ցարիզմի դէմ և կանգնած է սօցիալիստական յեղափոխական հողի վրայ։ Այդ բաւական չէ, ասում ենք, նրանք շուտով ստիպւած եղան ցաւով տեսնելու իրանց միտքը ծաղրւած մէկ ա-

րիւնալի հարածով : Մինչդեռ ցարիզմն իր խարազանի տակ էր դրոյն, միակերպ ուժով ու չափով, կովկասեան բանտրներին, առանց ազգի խտրութեան, սկսած ուսից ու գերմանացիից մինչև վրացին, պարսիկն ու հայը, լանկարծ պայթեց մէկ ուրիշ հրդեհ, յանկարծ բորբոքեց մէկ ուրիշ կռիւ : Մեր խօսքը եկեղեցապատկան կարածների գրաման խնդրի և նրա շուրջը եղած արիւնհեղ զէպքերի մասին է, որ տակաւին չեն գտել իրանց վախճանը : Եւ ահա յանկարծից և այս անգամ արդէն անբողոք ոռոսահայ ժողովուրդը՝ սխիւրած, իրերի գրութեան շնորհով, անցաւ բացարձակ բողոքի ու յեղափոխական հողի վրայ մոլեգնած ու բարբարոս ցարիզմի դէմ : Թուում է, թէ այդ իրողութիւնն արդէն պէտք է վերջապէս համոզէր մեր հակաճառողներին, որ ոռոսահայն իր երկրում կոչւած է մղելու յեղափոխական պայքար : Բայց ո՛չ, նրանց աչկախուփ յամառութեանը չափ չը կայ : Եւ մինչև հանգիստտես ենք մի ծաղրական, բայց և դառնալի տեսարանի : Մարդիկ, որոնք իրանց անւանում են յեղափոխական, ազատութեան շատագոյներ — և մենք ուզում ենք նրանց ճանաչել իբրև այդպիսիներ, — յանկարծ գալիս և կովկասեան իրականութեան այդ գրութեան միջոցին բացասում են ոռոսահայի նկատմամբ նրա բնական և անձեռնմխելի իրաւունքը կազմակերպելու յեղափոխ. կռիւ ոռոս մոլի կառավարութեան դէմ : Աւելին ևս : Ճաքացած գլուխները գնալով աւելին առաջ, զառանցանքի մէջ բանդագուշում են, թէ ոռոսահայերը սկսելով կռիւ ցարիզմի դէմ, դաւաճանում են թիւրքահայ գատը : Այդ ճղճղան խօսքի միամտութիւնը նոյնքան անչափ է, որքան այլանդակ է նրա հակաութիւնը և որքան անիրաւ է նրա եղբակացութիւնը : Ի՞նչ, ահա մեր ժողովրդի մէկ ամբողջ կէսը չարաչար ճնշում է ստանամանիքների արջի թաթի տակ, և դեռ վիճաբանութեան նիւթ էք դարձնում հալածւածի ինքնապաշտպանութեան իրաւունքը : Ի՞նչ, առանց ձեր կամ մեր կամքի, իրերի գրութիւնը ոռոսահային բերել հասցրել է ո՛չ միայն իր մարդկային առաջադիմութեան գործի պատմական պահանջի առաջ, այլ և դէմ առ դէմ կեանքի և մահու խնդրի, երբ իր կուրծքը տեսնելով կողակի մահատու սուխի տակ՝ նա իրան կոչւած ու հարկադրւած է զգում կազմակերպել ու մղել յեղափոխական պայքար, դուք եկել և այդ մեծ, բնական և անխուսափելի քայլն անւանում էք դաւաճանութիւն : Ընդ որ հրա հակառակը չէ՞, որ կը լինէր դաւաճանութիւն : Ընդ որ հրա հակառակը չէ՞, որ ոռոսահային կրտսորաց-

նէր պատմականապէս, թէ՛ իբրև մարդկային անհատի և թէ՛ իբրև ցեղի, և որ նրան արժանի կը դարձնէր մէկ անփառ ու սարկական կորստեան : Մի՛ շփոթէք ձեր մտքերը, որպէսզի չը շփոթէք այդպիսի ազազակիչ կերպով նաև խօսքերի իմաստը : Ի սէ՛ր գործի, որ ինչքան թանկագին է ձեզ, նոյնքան էլ մեզ, չը խրճբծենք, չը խառնենք խնդիրները, այլ պարզենք, լուսաբանենք նրանց համաձայն իրականութեան և ո՛չ թէ զգացման ու փափագի գրգռումով : Չասենք թէ հայութեան համար կայ միակ մի դատ՝ թիւրքահայ գատ, երբ արդէն ինքնաբերաբար եւ իրականութեան շնորհով ոռոսահայի վրայ էլ, ինչպէս և թիւրքահայի, ընկած է մի սուրբ պարտականութիւն, մի ծանր դեր, մի մեծ կռիւ, որի ելքից է կախած հայ ժողովրդի, ամբողջ հայ ժողովրդի մարդկային ազատագրութիւնը և առաջադիմութիւնը : Մեր թշնամիներն արձանացած են մեր դիմաց, երկուսն էլ ահաւոր ու հզօր, Բիւզանդիոնի թունաւոր գորտն, այդ դողօշը, Հիւսիսի արջի թաթը ընկած : Մենք չենք կարող անգիտանալ նրանցից մէկի կամ միւսի քաղաքական նշանակութիւնը մեր նկատմամբ և այն չարիքները, որ նրանք, ձեռք տւած իրարու, հասցնում են մասնաւորապէս հայ ժողովրդի, ամբողջ հայ ժողովրդի գլխին : Չը տարանանք, անձնատուր չը լինենք կրքերին, չը մտրեցնենք, կամայակամայ, մեր մտքերը, այլ առաջնորդւելով որոշ սկզբունքներով՝ վեր բարձրանանք, միշտ վեր բարձրանանք գործի և ի դէպի վստմ ու մաքուր միջնորդութեան, մինչև նրա տեսականութեան անհուն հօրիվոյնները, և քննենք, դարձեալ քննենք ու լուսաբանենք ներկայի ծանր խնդիրները և որոշենք մեր դերքերը, որոշելով մեր անելիքը, որոշելով մեր գործունէութեան միջավայրերը : Մենք գտնուում ենք Յեղափոխութեան մեծ խնդիրների տակ և դրանց քննութեան մէջ ամեն ճշմարիտ յեղափոխականները եղբայր են, միակերպ իրաւունքով ու պարտականութեամբ զէպի գործը : Հայ յեղափոխական ասպարէզում կան կուսակցութիւններ, որոնք ունեցել են անցեալում, առաւել կամ նւազ աստիճան տարբերութեամբ, իրանց գործունէութիւնը : Նրանք կոչւած են ցոյց տալու աւելի բարձր գործունէութիւն ներկայում և ապագայում ևս : Բայց դրա համար նրանք պարտաւոր են այժմ իսկ պատրաստելու տարբեր, որոնք լինեն յազմանակի գրաւական :

Նրանք պարտաւոր են այժմ իսկ վերաքննութեան ենթարկելու իրանց ծրագրային գրութիւնները, իրանց գործունէութեան եղանակները և որոշելու

իրանց դիրքը՝ համաձայն մի կողմից թիւրքահայ և միւս կողմից ոռոսահայ իրականութեան : Հրապարակի վրայ են այժմ, ընդհանուր առմամբ, մի կողմից ազգայնական ծրագրի և միւս կողմից՝ սօցիալիստական : Վերոյիշած վերաքննութիւններն ուղղութիւն կը տան յեղափոխական հիմա մտամոլար ու խառնաշփոթ տարրերին, կը բանան քննական հոսանք դրանց ընթացքի առաջ, կուղղեն դրանց զէպի իրանց կրթած սկզբունքների քննական աւազանը : Այդ տարրերից նրանք, որոնք ունեն և կամ առաւելապէս հակած են դէպի զուտ ազգայնական ուղղութիւն, կը հարեն այդ ծրագրին : Միւսները, որոնք ունեն կամ առաւելապէս հակած են դէպի սօցիալիստական ուղղութիւն, կը հետևեն այս վերջինին : Եւ այդպիսով կը պարզւէ հայ յեղափոխական ասպարէզի պարտ միջնորդը, երկու հոսանքն էլ յայտնուելով իբրև բընական արդիւնք հայ կեանքի պատմական որոշ րօպէի և արտայայտութիւն նոյն կեանքի, թէև ծագումով տարբեր պատմական՝ ձգտումների, բայց ձգտումների, որոնք մի և միւս կողմից էլ կոչւած են յեղափոխական պայքար մղելու ընդդէմ բռնակալութեան, մի կողմից՝ թիւրք, միւս կողմից՝ ոռոս : Ո՞վ դիտէ, հէնց այդ կէտում, ուր իրարու հետ գալիս կցուում են այդ երկու կարգ տարբեր ձգտումները, գուցէ մօտ ապագային այդ երկու կուսակցական մեծ համախմբումների միջև գոյանայ իսկ գործնական համաձայնութեան մի պայման : Բայց դա դեռ ապագայի խնդիր է :

Գրանք են ահա Հայ Յեղափոխութեան առաջը դրած լընդիրները ներկայումս :

Մենք ուզում ենք յուսալ, մենք ուզում ենք հաւատալ, որ հայ ճշմարիտ յեղափոխական լինենք, բոլոր յեղափոխական ընկերները, կառաջնորդւելու արդարամիտ ոգով ու հասուն մտքով և հարազատ ժողովրդի ներկայ տողանակի միջոցին կը կատականութեան բարձրութեան վրայ և կիմանան քննել ու պարզել հայ յեղափոխական ներկայի մեծ խնդիրները : Այդ յուսով, այդ հաւատով լի՝ մենք բացականչում ենք. — Կեցցէ՛ Հայկական Յեղափոխութիւն :

Ապա մեր ամենալիքում իղձը լինելով շուտով կազմւած ու հաստատուած տեսնել Հայ Սօցիալ-Դեմոկրատական կուսակցութիւն, և այդ մտքով հրաէք կարգալով մեր բոլոր հայ սօցիալիստ ընկերներին, մենք բացականչում ենք. — Կեցցէ՛ Հայ Սօցիալ-Դեմոկրատիա :

Մեծ Թիւրքահայ ԶԱՐԳԱՆ

Շարժումն թիւ 574-ում «Միակ խիստի ճամբան» վերնագրով առաջնորդը կարգաւորեց, որ կուսակցայն տարու Հայութեան, այն էլ վճարակաւ նորէն, այն ճամբան՝ որ միակն էր ու խնայեցին :

Սակայն մենք կուզէինք վերաւճել այդ առաջնորդը և տեսնել, որքան արամաբանական և սրբան ապագայ խոստացող էր :

Ընդ է որ ժամանակին մի ինչ որ Սօսի Գուգարեան, *) մի ինչ որ կուսակցական նիւսեց, դարձեալ նոյն խմբի ձեռք, ինչով որ այսօր կը փորձւի նստել Հրաչեայ Մարալ :

Պ. Մարգարեանի կըսէ. «Երկու կողմն ալ ունին իրենց բնական պատճառները» : Մենք էլ նոյնը կը կրկնենք, աւելացնելով սակայն, որ չէ թէ միայն այդ կողմերը, այլ ամեն կողմից ունի իւր պատճառը, հետևաբար, Պարոնը լաւ շատ լաւ պիտի անէր — եթէ ի հարկէ քիչ բարեխղճութեամբ ունենար — փնտռելու այն պատճառները, որոնք այդ երկու արխանապետներին դուրս նստեցին Հին Հայկեան շարքերից : Չէ՞ մի որ, առ էլ մի կողմից է և առաւել խոշոր կեանքով, քան դրանց կողմերը, չէ՞ մի որ դրանց այդ կողմերը հէնց իրենց արտաքսման արդիւնքն էին : Եւ ինչ է այսօր Սօսիկ Գուգարեանը . . . հարցրէ՛ք, պ. Մարգարեանի կէտէ միայն անձնօթ էք՝ կովկասի Դաշնակցականներին, իսկ ինչ է եւ ինչ պիտի լինի Հրաչեայ-Մարալի թէև չէինք ուղեր առ այժմ շատ բան անել սակայն հետեւեալը պարտք պիտի համարենք յայտնել, որպէսզի լաւ ճանաչէք ձեր պաշտպաններին, ձեր գլխի կը ընկնողին և վերջապէս . . . Հըն, հակառակութեան մէջ իսպառ տեղ չունեցողին :

Դեռ երէկ էր, որ նոյն այդ Հրաչեան կովկասում Դաշնակցական բարձր լընդիրականներն էր գոցում և յօնքերը վերայ կիտում, աւելով թէ, աննիկ ո՞վ են : Դեռ երէկ էր, որ նոյն այդ պարոնը բարեւ անգամ չէր ուղեր սակայն Դաշնակցական անուն կրողին, եթէ գտնէր նոյն իսկ մէկը, որ արտանց փափագող լինէր Չէյթուի գործիչին երեսը գէթ տեսնել (ակամօք խօսի Օղեսասյի Դաշնակցական մի ընկերակց) և վերջապէս դեռ երէկ էր, որ Հրաչեայ Մարալ կոչւած անձնատէր ու փառամտ պահի արարածը Դաշնակցութեան դէմ լուսանքներ էր թափում և դրա համար շատ անգամ իւր ընկերներին շարժար քննադատում, այսօր՝ այդ երանելի ճարտաստ, գլուխը կտրցած, մտացած ձեւացնելով իւր երկկան զէքը, գալիս ընկնում է Դաշնակցութեան գիրկը, կարծելով որ, Հ. Յ. Դաշնակցութիւնը մի անկեղծաց է կամ մի Արշակունի ուր ամեն տեղից, հիւանդներ կամ այլ յանցանքների տէր արարածներ կարող են ապաւնէ գտնել, բայց . . . լիսյոյս ենք որ պիտի սխալի :

*) Սօսի Գուգարեան եղած է Հընչակեան, սակայն 1895 թւին կովկասում կատարած մի շարք նիւթական ու բարոյական զեղումների պատճառաւ, նոյն թւին կովկասում գտնւում և Հընչ, ընդհ. Պատգ. ժողովից նրան կուսակցութիւնից արտաքսեց : Սոյն վճիռը վաւերացած է նաև 1896 թ. Հընչ, ընդհ. Պատգ. ժողովից : Մասնաւորաբար պ. Մարգարեանի խօսք հուրը կուսակցին քայս մասին հարցնել նախկին Հրաչեան, բայց ներկայումս դաշնակցական պրօպագանդիստ պ. Հով Գուգարեան :

Շարունակներ:

Եւ որքան ցած է կանգնած Վարդոբ «յեղափոխական» «վան» միտքը: Ան չկրնար հասկնալ թէ մեր իտէալներուն հիմը կը կազմէ ոչ թէ մեր ազգին «) անցեալը եւ կամ մէկ առանձնա-յատկութիւնը, այլ անոր ներկայն, թէ մեր գաղափարները կը հակասեն հայ պոետաւորի եւ մանր պոետաւորի շնորհաւորութիւնը կը տարբերին շատ մը յեղափոխական գործիչներու հայեացքներէն, թէ մեզ կը բաժնեն երկու իրարու հակառակ հասարակա-կան դասակարգերու տարբեր ճակատագիրները: Բայց առից պէտք չէ եզրակացնել թէ «մենք ծաղրում ենք» ազատութեան այդ արժանիքները: Ոչ, մենք առած ենք եւ կուտանք արժանի յարգանքը այդ քաջարի ու յանդուգն նահատակներուն, որոնք կեանքերին զոհեցին նախատանի ազատագրութեան գործին համար: Մենք կը բռնենք ու կը պնդենք այս կէտին վրայ, թէ այդ հերոսները պաշտպան են ուրիշ հասարակական դասակարգի շահերուն, որ յանձին հայկական յեղափոխութեան կը բերէ առայժմ նախատանի հասարակական զարգացումը: Այս տեսակէ-տէն քննելով, առո՞նք որոշ նշանակու-թիւն ունին եւ յարգանքի արժանի են, թէ եւ սօցիալիստ շրջան: Որպէս թէ մենք կը ծաղրենք եղբոր այս գործիչները սօցիալիստ շրջանուն հա-մար: Աս ուրիշ բան չէ, բայց եթէ բացարձակ շարժանութիւն:

Տիրոջ, Մօնթէսքրէօ, Գալվին, Լիւտէր, Չվինքլի, Գրիստոս Միլրա-պօ, Ռոպէտսթէր, Տէմուլէն, Տանդոն, Մարտի, Ռաքոլսթի, Պէնքոլսթի, Գարալիսթի, Լէվսթի, Պետօ, Վաղգէն, Բարկէն Սիւնի, Գամառ-Գալիսթի, Դուրեան եւ ուրիշ շատ մը գործիչներ սօցիալիստ չէին, բայց սօցիալիստ-ներն են որ զանոնք իրենց արժանի տեղը գրին եւ ոչ մէկ սօցիալիստ «չէ ծաղրում նրանց»:

«Դրանց համար (հայ սօցիալիստ-ներուն համար, — Ա. Յ.) ծաղրելի են Գարիբալդիները, Լաֆայէթները, Վաղգէնները, Տէմուլէնները, Բոցարիստե-րը, Լէվսթիները, որոնք թէ եւ ժո-ղովուրդներ ազատեցին, բայց սօցի-ալ-դէմօքրատներ չէին: Դրանց հա-մար ոչինչ են մեր Պետօները, Բար-կէնները, որովհետեւ զրանք չէին սօ-ցիալ-դէմօկրատներ»:

Թէ եւ ընթերցողը կրնայ եզրա-կացնել այս տողերու գրողին անբա-րեխդութիւնը, բայց մենք թոյլտը-

*) Մեր այս միտքը ապացուցա-նելու կը ծառայէ Վարդոբի «Ովքեր են մեր ներկայ սօցիալիստները» անմիտ յօդուածը՝ հրատարակուած Շարժում-ի 547 թիւին մէջ: Մասնաւորապէս կանգ առնել այդ յօդուածին վրայ ա-ւելորդ է քանի որ գործնական հա-սարակ հայտնիքի մը հետ է: «Ովքեր են մեր ներկայ սօցիալիստները» (պէտք է ք ըսել «ովքեր են հայ սօ-ցիալիստները») հարցման կարճ կերպով կը պատասխանենք հետեւեալը:

Մենք, հայ սօցիալիստներս, ներ-կայացուցիչներ ենք հայ բրօշէրարի-ստին, որ գոյութիւն ունի եւ կը զարգանայ հայ կեանքին մէջ: Ակնե-րու է թէ մեր մէջ սօցիալիզմը չէ կարելի պատմականապէս արգարացնել («մեր սօցիալիստները նախահայրՄի-քայէլ նախահայր» մատնանշելով այդ միտքը ուզել է յայտնել Վար-դօն, բայց ինքը չհասնելուն չէ կըր-ցած զայն բացատրել):

**) «Շարժում» N-օ 547 «Ովքեր են մեր ներկայ սօցիալիստները»:

Լուսթիւն պիտի ինչպե՞ս մեր ըն-թերցողէն քանի մը քաղաւածներ ը-նելու համար «ПО ПЯТЯ НА СВОБОДА-ТА» գրքիցէն, որոշակի ցոյց տալու համար մեր յարաբերութիւնը դէպի հայ յեղափոխական գործիչները: Անպատ-մըն ալ ըսենք որ այդ գրքիցէն յա-տաջարանը հայերէնի թարգմանուելով գետեղուած է «Շարժում»-ի մէջ գեւ 1903 Ապրիլ 26-ին՝ «Ղարբ» Պուլկար ընթերցողին առջեւ՝ խորագրով: Ահա այդ գրքիցէն եւ ատոր յատաջարա-նէն կը քաղենք հետեւեալները:

«Նոյնը կը տեսնենք այսօր Հայ-աստանի մէջ ալ: Հայ ազգին՝ գոյու-թեան կոխը մղած արդի շրջանը ծաղ-կումը, վերածնունդը շրջան է փոփո-րկալի ու արկածալի շրջան: Հայաս-տանի հիմա ապրած պատմական բօ-պէն վառ, ձգտող ու հրաբխային է: Հայաստանի կամ աւելի ճիշտը, հասարակային վերածնող, վերելող դասա-կարգին անտեսական ու կուլտուրա-կան զարգացման առջեւ շինական բար-ձր ու մտայն պատերու պէս կանգնած է Սուլթանի ինքնակալութիւնը, սա՞՞-կական անողորմ բռնութիւնը իր միջ-նադարեան, առատական հասարակա-կան դրութիւններով: Պէտք է կոր-ծանել այս սեւ պատը: Ու ահա այս փոփոքիկ է բոլորն ալ ծնի փոփոք-կալի զաւակներ, որոնցմէ մէկ քանի-ներ զաւելուական ձեւով կը նկարեն տաճկական ու աքիական հին կարգե-րու, ըմբռնումներու ու գաղափարնե-րու անախորժիմը, կամ թէ անողորմ կերպով կը հարուածեն զանոնք եւ միեւնոյն ատեն սքանչելի կերպով կերպեն ապագայ ռամկավարական նոր Հայաստանը, անոր արհեստանոցները, վարժարաններն ու համալսարանները: Այսպիսի բանաստեղծներն են Ռաֆ-ֆի, Գամառ-Գալիսթի, Նալպաստեանց (ստալին հայ ընկերակրական), Նա-զարեանց, Պ. Դուրեան, Ղարբ, Հայ Գուսան եւ այլն» («Շարժում» N 511)

«Կեանքը առանց յեղափոխութեան իմաստ չունի. կեանք չէ, որովհետեւ նոյն ինքը կեանքը յեղափոխութիւն է: Յեղափոխութիւնը բնութեան սիր-տըն է նաեւ հասարակութեան սիրտն: Երբեք միջավայրը անձնաւորութիւն-ներ կը ծնի, որոնց դրօշակն է միայն յեղափոխութիւնը:

«Այսպիսիներն էր Բաքիկե Սիւնի «Անիկա յեղափոխական էր: «Անիկա յեղափոխական գեղեցիկ վարդն էր, որ կը բուսնէր իր ող-բացեալ ժողովրդին տառապող կուրծ-քերուն վրայ միայն»:

«Պետօ՝ անունն է այնպիսի հա-զուագիւտ ու բախտաւոր ժողովրդա-յին արժանանքէն մէկուն, ինչպիսի-սներ կրնայ ծնիլ ու պիտի ծնի հայ քաջազն մայրը: Պետօ՝ իր տառապող ժողովրդին զայրացած առիծն էր:

«Անիկա սիգապանծ լեռներէն փոխած ապառաժն է, որ շանթով ու ճարձատուով կը ձգուի բռնութեան գլխուն վրայ:

«Վասպուրականի բուրաւէտ դաշ-տին մէջ մղչ Ներսէս էր, որուն սր-տաբուղի աղօթքն էր:

Подкрѣпи имень ржката, Та кога възстане роба, Въ редоветѣ на борбата Да си найда и азъ гроба!»

«Վաղգէն անունն է յեղափոխական այն կրակին, որ պայծառօրէն լուսա-ւորեց հայ ազատագրական շարժման մասը՝ հորիզոնը արեւոտ ճառագայթ-ներու խորձով, մրափուն հողիներ արթնցուց, իւրյած ականջներուն հզօ-րութեամբ խօսեցաւ, ապստամբական հրդեհը արժարձեց, վատողները սար-

*) «По пята на сводата» հր. 73
**) Նոյնը հր. 74

սեց. խուլ շրջակայքը հնչեցուց, ա-զատութեան փրկարար լոյսով փայլե-ցուց հայ գերիին գիտակցութիւնը, նոր կեանքի լապսերը վառեց եւ... վերջապէս կեանքը գոհեց հրապարակ ազատութեան հրաշալի խորանին առ-ջեւ»:

Չէյթունի, Սասունի, Խանասու-րի, Վանի եւ ուրիշ հերոսներու մա-սին տեսէք նոյն գրքիցէն 69-74 էջերը: (Մնացածը գալ անգամ)

Տիրիպէ, Անդրեաս Յակոբեան

Ք Ր Օ Ն Ի Կ

Հ Ա Յ Կ Ե Ա Ն Ք Է Ն

Աւելորդ չենք սեպեր հոս-մատնանշել՝ իր հրատարակու-թեան առաջին օրը ինքզինք չէ-զօք հռչակող և յետոյ Գաշնակ-ցութեան փողը փչող «Շարժում»-ի խմբագիրներու առաջակական տգիտութիւնը ապացուցանող նո-րագոյն փաստի մը վրայ:

«Շարժում»-ի 574 թիւին մէջ հրատարակուած յօդուածի մը տակ կը կարդանք հետեւեալ ծանօթու-թիւնը:

«Բայց ի՞նչ հակասութիւն, միթէ սօցիալիստներու համար ժամհարաններ և Պալեօլաններ մարդկային կազմակերպութեան մէջ») վնասակար տարրեր չէ՞նք: «Շարժում»-ի գրողը արդեօք կրնա՞յ ցոյց տալ սօցիալիստա-կան գրութիւն մը, ուր արտա-յայտուած ըլլայ այդ յիմար ու անհէթեթ միտքը:

Սօցիալիստները կը ձգտին ոչնչացնել ներկայ ընկերական անարդար հաստատութիւնները (institution) և ոչ թէ հարուստները, կամ աւելի ճիշտը քարթիլիստ-ները, որովհետեւ առաջիններու ոչնչացումով վերջինները արդէն պիտի դադրին գոյութիւն ունե-նալէ: «Շարժում»-ի սօցիալիստ-ներուն վերաբերման շինական վարդապետութեան մասը կը կազ-մէ: Բայց առաջին անգամ չէ որ այդ թերթը սօցիալիզմը անիշ-խանականութեան հետ կը շփոթէ:

Երբ վերջին տարիները Նո-րոպայի մէջ անիշխանականութեւն ձեռքով ոճրագործութիւններ կա-տարուեցան, սօցիալիստները եւ զան ամենէն աւելի բուռն և խիստ կերպով դատապարտողները գըր-գըռուած մտքերու արդիւնք եղող գործունէութեան այդ վնասակար եղանակին, որովհետեւ անոնք հա-մուտած էին որ ընկերական չա-րիքներու պատասխանատուները ոչ թէ անհասանելի են, այլ նոյն իսկ ընկերական կազմակերպութեան քարթիլիստական ձեւը (forme):

*) Նոյնը հր. 75
**) Մարդկային կազմ (organisme) թէ ընկերական կազմակերպութիւն (organisation): Շարժումի խմբագրու-թիւնը եթէ նախկին թարգմանի առ-կերպներուն ձեռքը պտուէր, թերեւս այսպիսի կոպիտ սխալներ չգործուէ-ին: Ներքին է միթէ խմբագրի մը ըն-կերական կազմակերպութեան կամ մարդկային ընկերութեան գաղափարը արտայայտելու համար «մարդկային կազմակերպութիւն» անիմաստ խօսքը գործածել:

Շիտակը արդ հաստատու է վի-ճակը հայութեան, որուն հասա-րակական կարծիքը առաջնորդե-լու յասակնութիւնը ունենցողները աչքան տարրական բաներու ան-գամ անտեսելի են:

Աւելցուցէք ասոր վրայ որ ա-յարձակ անկախ վերարկու հա-գած քամէլէօն-հրապարակագիր Վերջապէս խմբագիրը «ընկերա-կան կազմակերպութիւն» հռչակե-լը և ձեռ աչքին առջև կը պատ-կերանայ հայ հրապարակագրու-ներու մտաւորական մեղիութիւնը իր բոլոր տղեղ կողմնքով:

Շատ ցուալի է այս երևոյ-թը և այս առթիւ պէտք է խոս-տովանինք որ հասարակական ինչպիսիքը այնպիսի ակերտ ոչ-թային քննութեան կենթարկուին մեր մամուլի մէջ, որ ուրիշ բան չապացուցաներ, բայց եթէ զայն վարողներուն քաղաքական որոշ գաւառներէ զուրկ ըլլալը: Ըն-դունելու ենք սակայն որ մեր հրատարակագիրներու գլխուն մէջ տիրող գաղափարական խառնաշը-փոթութիւնը անբնական (anormal) երևոյթ մը չէ, սրովհետեւ ան, առաւել կամ նուազ չափով, ճշ-գրութեան կը պատկերայնէ հայ-կական իրականութեան քաօսը: Անշուշտ մեր կարգ մը խմբա-գիրներուն մտաւորական ապիկա-րութիւնը մասամբ մը արդիւնք է նաեւ այն իրողութեան, որ հա-սարակութեան այդ յաւակնոտ առաջնորդները մտաւորական բա-ցարձակ ծոյրեր են և իրենց մտա-ծողութեան սահմանը ընդարձա-կելու նպատակով ամեն աշխատան-քէ կը խոսափին: Հասարակա-կան այդպիսի պատասխանատու գեր ստանձնողները եթէ կը փա-փաքին վեր բարձրանալ այն մի-ջակութեան, ուր կը խարխափին և եթէ չեն ուզեր որ իրենց ան-հէթեթ և սղորմելի «քննադա-տութիւնները» միմիայն արհա-մարձանքի արժանանան, պէտք է ամեն կերպ զոհողութիւններ ընեն յոգնին, աքնին իւրացնելու ըն-կերական գիտութիւններու ամե-նատարրական ծանօթութիւնները և ընդլայնելու իրենց մտաւորա-կան հորիզոնը, որովհետեւ «ար-քայական ճամբայ չկայ գիտու-թեան համար, որուն լուսեղէն կատարներուն հասնելու բաղդը կուենան անոնք միայն, որ չեն վախնար անոր սեպացած ուղիներէն բարձրանալու յօգնութեան»:

Տարակոյս չունինք որ մեր այս համեստ գիտողութիւնները «իմաստակութիւն» ապուշ յորջուր-ջու միջ պիտի ընդունին ոչ միայն-կան բարձրութիւններու մէջ սա-ւառնող մեր մամուլի տղեղներ-կայացուցիչներուն կողմէ, բայց ատիկա պատճառ մը չէ որ մեր գրածները պարունակեն անուրա-նալի ճշմարտութիւններ և յստակ կերպով արտացոլան են իրական-նութիւնը:

*) K. Marx, Capital հատ. Ա.